

# Շաբաթական ակնարկ 25.03.24

Սույն «Շաբաթական ակնարկ» վերլուծությունն՛ը կազմվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից և կարող է օգտագործվել **միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկություն:** Վերջինս արդիական է հրապարակման օրվանից շուկայի վարքագծով պայմանավորված ողջամիտ ժամկետում: «Շաբաթական ակնարկ» վերլուծական հաշվետվությունը կազմվել է ներկայումս հասանելի **հանրային տեղեկատվության** հիման վրա, որն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ը համարում է վստահելի: Սակայն, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **չի երաշխավորում,** որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն **չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ ֆինանսական գործարք իրականացնելու դեպքում:**

«Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ ներկայացված գործիքների ընտրությունը պայմանավորված է **շուկայի ընդհանրական մոտեցմամբ**, բարձր շրջանառության ծավալ ու հանրային լայն ընկալում ունեցող ընկերությունների բաժնետոմսերի նկատմամբ հաշվետու ժամանակահատվածում ձևավորված մեծ հետաքրքրությամբ: Հետևաբար, ընտրված ներդրումային պրոդուկտները կարող են **չհամապատասխանել բոլոր ներդրողների ցանկություններին և պահանջներին**: Ներդրումներ իրականացնող ցանկացած անձ պետք է **անհատապես ուսումնասիրի և յուրովի գնահատի** իր ներդրումային հնարավորությունները, ներդրումային պորտֆելի կառուցվածքը և դրանցից բխող ռիսկերը բոլոր կամ առանձին վերցրած ակտիվների գծով: Նախքան որևէ ներդրումային որոշում կայացնելը կամ գործարք իրականացնելը, յուրաքանչյուր ներդրող պետք է ուսումնասիրի այն տեղեկատվությունը, որը պարունակում է ռիսկերի, միջնորդավճարների և հնարավոր այլ ծախսերի նկարագրությունը: Յուրաքանչյուր ներդրող պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի **ռիսկ/եկամուտ հարաբերակցությանը** և համոզվի, որ ներդրումը համապատասխանում է վերջինիս ներդրումային նպատակներին:

Հնարավոր կորստի կամ եկամտի ցանկացած կանխատեսում **զուտ նկարագրություն** է և չպետք է դիտվի որպես հնարավոր առավելագույն կորստի կամ շահույթի սահմանափակում: Ներդրումները **երաշխավորված կամ ապահովագրված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** կամ այլ ֆինանսական ընկերության կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ապահովագրական գործակալության կողմից, հետևաբար **բախվում են ներդրումային ռիսկերի հետ**, ներառյալ՝ **ողջ գումարի հնարավոր կորստի ռիսկը:** Ներդրողներն, ովքեր ներդրումներ են կատարում արտարժույթով, պետք է տեղյակ լինեն փոխարժեքի տատանումների ռիսկի մասին, որը կարող է հանգեցնել ներդրված գումարի կորստի:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ենթադրում է, որ հաճախորդը նախքան ներդրումներ իրականացնելը, **գիտակցում և տեղյակ է գործարքի հետ կապված ցանկացած հարկային և իրավական** պարտավորությունների մասին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **պատասխանատվություն չի կրում** այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր **վնասների համար**, որոնք առաջացել են «Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

ԱՄՆ չորս հիմնական ինդեքսները արձանագրեցին դրական եկամտաբերություն




Այս շաբաթ դոլարի փոխարժեքը բարձրացավ մինչև վեց շաբաթվա առավելագույն մակարդակը




Bitcoin-ի թույլ կատարողականը




30 և 2 տարեկան պարտատոմսերի եկամտաբերության բացասական տարբերությունը նվազեց



## Նախորդ շաբաթվա ընթացքում S&P 500 -ը աճեց 2.23% -ով




## Նախորդ շաբաթվա ընթացքում Nasdaq-ը աճեց 3.01%-ով



## Նախորդ շաբաթվա ընթացքում Dow Jones-ը աճեց 1.95% -ով




## Նախորդ շաբաթվա ընթացքում Russell 2000-ը աճեց 2.21%-ով



- ԱՄՆ-ի չորս հիմնական ինդեքսները արձանագրեցին նույնանման դրական եկամտաբերություններ,
- Nasdaq-ը ԱՄՆ-ի չորս հիմնական ինդեքսներից ամենաբարձր եկամտաբերությունն է գրանցել



Նախորդ շաբաթվա ընդացքում արհեստական բանականության (AI) առնչվող բաժնետոմսերը գրանցեցին 3.63% աճ:




Apple-ի (AAPL)-ի գինը իջել է հակամենաշնորհային հայցի հետևանքով: Այն մեկ օրվա ընթացքում արձանագրել է մոտավորապես 3.9% անկում:



Micron Technology (MU)-ի եկամուտների մասին հայտարարությունը դրական ազդեցություն ունեցավ բաժնետոմսերի գնի վրա: Շաբաթվա ընթացքում ընկերության բաժնետոմսերը բարձրացան 18.19%-ով:




FedEx (FDX)-ը ներկայացրեց դրական հաշվետվություն և հայտարարեց, որ բեռնափոխադրումների ոլորտը գտնվում է առողջ ցիկլի մեջ: Շաբաթվա ընթացքում FDX-ի բաժնետոմսերը բարձրացան 12.25%-ով:



General Mills (GIS)-ի եկամուտների մասին հաշվետվությունից հետո GIS-ի բաժնետոմսերի գինը աճեց 3.1-ով% :




Nike (NKE)-ը հաշվետվությունից հետո կորցրեց իր բաժնետոմսերի արժեքի 5.8%-ը: Դրան նպաստեց նաև ընկերության հայտարարությունը 2024 թվականին սպասումների մասին:



ԴՊՀ-ի կողմից 2024թ. ընթացքում երեք անգամ տոկոսադրույքի կրճատման մասին հայտարարությունը դրական ազդեցություն ունեցավ դոլարի ինդեքսի վրա:




ԴՊՀ-ն հայտարարեց, որ տարվա ընթացքում երեք անգամ տոկոսադրույքների իջեցում է ակնկալում, և որի արդյունքում հիմնական տոկոսադրույքը 2024թ. վերջում կնվազի 83 բազիսային կետով՝ կազմելով 4.5% տարվա վերջում:



ԴՊՀ-ի հայտարարության ազդեցությունն ակնհայտ էր գանձապետական պարտատոմսերի շուկայում: Երկարաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը նվազեց 4 բազիսային կետով, իսկ կարճաժամկետ պարտատոմսերինը՝ 13 բազիսային կետով:




Շաբաթվա ընթացքում կորի բացասականությունը մի փոքր նվազեց, քանի որ 2 տարեկան պարտատոմսերի եկամտաբերության նվազումն ավելի մեծ էր քան 30 տարեկան պարտատոմսերինը:



Արծաթը մեկ շաբաթվա ընթացքում նվազեց -2.04%-ով: Այնուամենայնիվ, այն դեռ բարձր է տարեսկզբի մակարդակից:




Ոսկու գները կտրուկ բարձրացան ԱՄՆ ԴՊՀ-ի հայտարարությանից հետո հատելով 2,200 դոլարի մակարդակը, որը ռեկորդային բարձր գին էր, սակայն հաջորդող օրերին ոսկու գները սկսեցին նվազել:



Բենզինի գները դրական դինամիկա արձանագրեցին՝ աճելով 0.68%՝ վերադառնալով 2023 թվականի հոկտեմբերի մակարդակին




WTI-ը գտնվում է 75-85 ԱՄՆ դոլարի հավասարակշռության գների միջակայքում, որը բավականին ընդունելի գին է աշխարհի խոշորագույն նավթ արտադրող երկրների համար՝ ի դեմս ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Սաուդյան Արաբիայի, ինչը նշանակում է, որ մենք կարճաժամկետ կտրվածքով չենք ակնկալում էական տեղաշարժեր



ԱՄՆ դոլարը ամրապնդվել է ճապոնական իենի նկատմամբ, քանի որ Ճապոնիայի բանկը հրաժարվում է բացասական տոկոսադրույքներից, իսկ ԱՄՆ դոլարը ուժեղ շաբաթ ունեցավ




Դոլարը նույնպես ամրապնդվել է եվրոյի նկատմամբ: Դա կարող է պայմանավորված լինել նախորդ շաբաթ դոլարի փոխարժեքի դինամիկայով եւ ԴՊՀ-ի ավելի բարձր տոկոսադրույքներով՝ եվրոպական կենտրոնական բանկի (ECB) համեմատ



Bitcoin-ի (BTCUSD) դինամիկան նախորդ շաբաթվա ընթացքում թույլ էր (շաբաթվա ընթացքում եկամտաբերությունը կազմել է -6.65%)։ Հատկանշական է, որ 2024թ.-ի սկզբից Bitcoin-ի եկամտաբերությունը կազմել է +50.9%։




BTC-ի թուլացումը կարող է պայմանավորված լինել BTC ETF-երից արտահոսքով, որի զուտ ծավալը կազմել է մոտ -94 մլն ԱՄՆ դոլար։



S&P500-ը արձանագրեց բավականին կայուն աճի տեմպեր, մասնավորապես՝ վերջին 100 օրերի ընթացքում չի ունեցել 2% մակարդակից ավել անկում:




S&P500-ը հոկտեմբեր ամսից ի վեր հինգերորդ ամիսն անընդմեջ բարձրանում է: Այս հինգ ամիսների ընթացքում S&P500-ի ընդհանուր շուկայական կապիտալիզացիան աճել է 10 տրլն դոլարով:



Օգտագործված մեքենաների գների ինդեքը շարունակում է նվազել: Այս նվազման գլխավոր պատճառը էլեկտրական մեքենաներն են, քանի որ նրանց գները նվազում են շատ ավելի արագ:



Օգտագործված մեքենաների գների նվազումը տեսանելի է նաև էլեկտրոմոբիլ արտադրող ընկերությունների բաժնետոմսերի դիտարկումից: Նվազման միտումներ են նկատվում TESLA-ի մոտ, իսկ դասական մեքենաների արտադրողները, մասնավորապես՝ Toyota-ն, աճի միտում ունեն:






Այս շաբաթվա ընթացքում մոտ 175 ընկերություններ պատրաստվում են հրապարակել իրենց 4-րդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները: Ամենաբարձր շուկայական կապիտալիզացիան պատկանում է Cintas Corporation-ին (CTAS)-ին, որը տրամադրում է մի շարք ապրանքներ և ծառայություններ բիզնեսներին: Այլ ընկերություններից, որոնց հաշվետվությունները սպասված են շուկայում, առանձնանում են Walgreens Boots Alliance (WBA)-ը և Gamestop Corporation (GME)-ն են:

#1 / 175 Total    save as portfolio | create alert    Refresh: 3min | off    Page 1 / 9

| No. | Ticker | Company | Sector | Industry | Country | Market Cap | P/E | Price | Change | Volume |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | CTAS | Cintas Corporation | Industrials | Specialty Business Services | USA | 64.81B | 46.37 | 639.39 | -0.43% | 299,963 |
| 2 | PAYX | Paychex Inc. | Industrials | Staffing & Employment Services | USA | 43.48B | 26.87 | 120.84 | -1.22% | 1,426,363 |
| 3 | CCL | Carnival Corp. | Consumer Cyclical | Travel Services | USA | 21.59B | - | 17.08 | 0.35% | 18,428,175 |
| 4 | MKC | McCormick & Co., Inc. | Consumer Defensive | Packaged Foods | USA | 18.78B | 27.76 | 70.03 | 0.79% | 1,576,974 |
| 5 | WBA | Walgreens Boots Alliance Inc | Healthcare | Pharmaceutical Retailers | USA | 17.75B | 30.95 | 20.58 | -1.06% | 8,213,774 |
| 6 | JEF | Jefferies Financial Group Inc | Financial | Capital Markets | USA | 9.61B | 41.07 | 45.32 | -1.18% | 892,246 |
| 7 | SNX | TD Synnex Corp | Technology | Electronics & Computer Distribution | USA | 9.40B | 15.71 | 105.44 | 0.41% | 597,833 |
| 8 | ESLT | Elbit Systems Ltd. | Industrials | Aerospace & Defense | Israel | 8.98B | 33.30 | 202.00 | -1.17% | 15,097 |
| 9 | MSM | MSC Industrial Direct Co., Inc. | Industrials | Industrial Distribution | USA | 5.55B | 16.72 | 98.45 | -0.79% | 269,776 |
| 10 | RH | RH | Consumer Cyclical | Specialty Retail | USA | 5.42B | 32.25 | 297.21 | -4.55% | 745,347 |
| 11 | BRZE | Braze Inc | Technology | Software - Application | USA | 5.20B | - | 52.43 | -2.13% | 840,126 |
| 12 | DOOO | BRP Inc | Consumer Cyclical | Recreational Vehicles | Canada | 4.83B | 7.31 | 62.67 | -1.40% | 86,352 |
| 13 | FUL | H.B. Fuller Company | Basic Materials | Specialty Chemicals | USA | 4.39B | 31.16 | 80.69 | -0.53% | 228,524 |
| 14 | CNXC | Concentrix Corp. | Technology | Information Technology Services | USA | 4.06B | 10.62 | 61.27 | -2.65% | 443,001 |
| 15 | GME | Gamestop Corporation | Consumer Cyclical | Specialty Retail | USA | 4.00B | - | 13.10 | -4.10% | 4,365,253 |
| 16 | CXM | Sprinklr Inc | Technology | Software - Application | USA | 3.68B | 125.63 | 13.43 | -0.96% | 1,450,892 |
| 17 | NCNO | Ncino Inc. | Technology | Software - Application | USA | 3.46B | - | 30.55 | 0.53% | 617,086 |
| 18 | UNF | Unifirst Corp. | Industrials | Specialty Business Services | USA | 3.06B | 28.49 | 170.04 | -1.02% | 54,531 |
| 19 | PRGS | Progress Software Corp. | Technology | Software - Infrastructure | USA | 2.30B | 33.38 | 52.48 | -0.78% | 839,701 |
| 20 | CUK | Carnival plc ADR | Consumer Cyclical | Travel Services | United Kingdom | 2.25B | - | 15.51 | 0.52% | 1,176,122 |

Filters: earningsdate:thisweek    export

| | | | | |
|---|---|---|---|---|
| **MONDAY, MARCH 25** | | | | |
| 8:25 am | Atlanta Fed President Raphael Bostic speaks | | | |
| 9:05 am | Chicago Fed President Austan Goolsbee speaks | | | |
| 10:00 am | New home sales | Feb. | 675,000 | 661,000 |
| 10:30 am | Fed Gov. Lisa Cook speaks | | | |
| **TUESDAY, MARCH 26** | | | | |
| 8:30 am | Durable-goods orders | Feb. | 1.0% | -6.2% |
| 8:30 am | Durable-goods minus transportation | Feb. | -- | 0.3% |
| 9:00 am | S&P Case-Shiller home price index (20 cities) | Jan. | -- | 6.1% |
| 10:00 am | Consumer confidence | March | 106.5 | 106.7 |
| **WEDNESDAY, MARCH 27** | | | | |
| 6:00 pm | Fed Gov. Christopher Waller speaks | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **THURSDAY, MARCH 28** | | | | |
| 8:30 am | Initial jobless claims | March 23 | 214,000 | 210,000 |
| 8:30 am | GDP (2nd revision) | Q4 | 3.2% | 3.2% |
| 9:45 am | Chicago Business Barometer (PMI) | March | 45.0 | 44.0 |
| 10:00 am | Pending home sales | Feb. | 1.0% | -4.9% |
| 10:00 am | Consumer sentiment (final) | March | 76.5 | 76.5 |
| **FRIDAY, MARCH 29** | | | | |
| 8:30 am | Advanced U.S. trade balance in goods | Feb. | | -$90.5B |
| 8:30 am | Advanced retail inventories | Feb. | | 0.5% |
| 8:30 am | Advanced wholesale inventories | Feb. | | -0.3% |
| 8:30 am | Personal income (nominal) | Feb. | 0.4% | 1.0% |
| 8:30 am | Personal spending (nominal) | Feb. | 0.5% | 0.2% |
| 8:30 am | PCE index] | Feb. | 0.4% | 0.3% |
| 8:30 am | Core PCE index | Feb. | 0.3% | 0.4% |
| 8:30 am | PCE (year-over-year) | | 2.5% | 2.4% |
| 8:30 am | Core PCE (year-over-year) | | 2.8% | 2.8% |
| 11:30 am | Fed Chair Jerome Powell speaks | | | |




060 408 005, 060 408 002, 010 592 301
Երևան, Բուզանդ 87, 85 գրասենյակ
brokerage@araratbank.am